https://doi.org/10.46991/S&L/2022.94.047

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐՐԵՐԸ

Տաթևիկ Սիրադեղյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

Արդարադատության մատչելիության սկզբունքը համեմատաբար նոր իրավական եզրույթ է: Այն թեև որոշակի չափով գիտական հետազոտության նյութ է դարձել, սակայն դրա բնորոշման հիմնախնդիրը մինչ օրս շարունակում է գիտագործնական առումով արդիական լինել, քանզի դեռևս միասնական չափորոշիչներ չեն ձևավորվել:

Արդարադատության մատչելիության սկզբունքի երաշխավորումը համընդհանուր պարտադիրություն է ստացել ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդաժողովի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» ընդունմամբ, որի 8-րդ և 10-րդ հոդվածներով ամրագրված են դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, որոնք հետագայում երաշխավորվել են նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) և այլ միջազգային հիմնարար փաստաթղթերով: Միջազգային պայմանագրերում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ամրագրմանը հաջորդել է դրանց իմպլեմենտացումն անդամ պետությունների հիմնական օրենքներում. անձի՝ իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է Իտալիայի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի Հանրապետության և այլ պետությունների հիմնական օրենքներով: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն ամրագրվել են նաև Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքներում՝ նախատեսվելով նախ՝ Երրորդ Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության համապատասխանաբար 38-րդ և 39-րդ հոդվածներով, այնուհետև՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով Սահմանադրության 18-րդ և 19-րդ, ինչպես նաև՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով:

Մարդու իրավունքների դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության՝ հանրային իշխանության սահմանադրական պարտականության ապահովմանն ուղղված իրավական միջոցների շարքում: Այն համարվում է մարդու իրավունքների կառուցակարգային երաշխիքների ամենակարևոր և քաղաքակիրթ ձևը[1]: Այս իրավունքը բնութագրվում է որպես անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ որպես այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք[2]: Դատական պաշտպանության իրավունքից ածանցվում է անձի արդար դատաքննության իրավունքը, որը թեև առանձին հիմնարար իրավունք է,

[1] Տե՛ս **Ա. Երիցյան,** «Մարդու իրավունքներ. պատմատեսական, փիլիսոփայական և իրավաքաղաքական հիմնախնդիրները», Երևան, Հեղինակային հրատ., 2011 թ., էջ 263:
[2] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք» հրատ., 2010 թ., էջ 206:

սակայն նախատեսում է այն նվազագույն պայմանները, որոնք անհրաժեշտ են դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու համար: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների երաշխավորումն ու ապահովումը ժողովրդավարական, իրավական պետության, իշխանությունների տարանջատման սկզբունքի գոյության ու կայացման կարևոր բաղադրիչներից են, քանզի առանց իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների, դրանց հռչակումը պատրանքային բնույթ կունենա: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները մի կողմից անձի խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության ու վերականգնման պետության կողմից երաշխավորված միջոց են, մյուս կողմից՝ սահմանափակում և զսպում են հանրային իշխանությանը՝ զերծ մնալու դրանց ցանկացած խախտումներից, քանզի. «Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած, այդ թվում՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կատարվող խախտումները, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»[1]:

Անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ իրացումն ապահովվում է հատուկ կառուցակարգերի ու ընթացակարգերի միջոցով՝ պետական իշխանության ինքնուրույն ճյուղի կողմից և ենթադրում դատարանների կողմից արդարադատության իրականացում: Իրավունքի տեսության մեջ արդարադատությունը բնորոշվում է որպես Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ, որն իրականացնում է միայն դատարանը՝ դատական համապարտադիր որոշումների օրինականությունը, արդարացիությունը, հիմնավորվածությունն ապահովող օրենքով սահմանված պահանջների ու կարգի խստագույն պահպանմամբ՝ համապատասխան դատավարական ձևերով, և ուղղված է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական գործեր քննելուն և լուծելուն[2]: Արդարադատությունը սահմանվում է նաև որպես դատական իշխանության իրականացման միջոց, իսկ դատավարության տեսակները՝ որպես արդարադատության իրականացման եղանակներ[3]: Առանձին հեղինակներ արդարադատությունը բնորոշել են որպես իրավակիրառ գործունեության տեսակ, որն իրականացվում է արդարության սկզբունքներին համապատասխան իրավական վեճերի լուծմանն ուղղված պարտադիր ուժ ունեցող որոշումների ընդունմամբ[4]: Ըստ Վ. Հովհաննիսյանի՝ արդարադատության գլխավոր նպատակը մարդու իրավունքների և ազատությունների՝ որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունն է, որն օրենքի ֆորմալ իրացման արդյունքում կարող է չիրականանալ[5]: Արդարադատությունն իրականացվում է հատուկ դատավարական ձևով, որում որոշված են դատավարության փուլերը, դրանց

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 207:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 897:

[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» երկրորդ գիրք, 6-րդ լրամշակված հրատարակություն, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, Երևան, Տիգրան Մեծ հրատ. 2016 թ., էջ 319:

[4] Տե՛ս **Костогрызов П. И.,** «Понятие правосудия: философско-правовой анализ», 2019թ., էջ 180, https://www.researchgate.net/publication/337707055_Kostogryzov_P_I_Ponatie_pravosudia_filosofsko-pravovoj_analiz_THE_CONCEPT_OF_JUSTICE_PHILOSOPHICAL_ AND_LEGAL_ANALYSIS:

[5] Տե՛ս **Վ. Հովհաննիսյան,** «Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», թիվ 3 (30), Երևան, 2019թ., էջ 65, http://www.ysu.am/files/08V_Hovhannisyan.pdf:

շրջանակներում կատարվող դատավարական գործողությունների հաջորդականությունը և դատավարության մասնակիցների դատավարական գործառույթները. դատավարական ձևի այս ընդհանուր բնութագրիչները հատուկ են բոլոր դատավարություններին՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական[1]: Արդարադատության իրականացումը, ըստ էության, դատական իշխանության (դատարանների) հիմնական, բացառիկ գործառույթն է և կարող է ապահովել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը, երբ մատչելի ու հասանելի է յուրաքանչյուրի համար:

Ինչպես գործնականում, այնպես էլ տեսության մեջ «արդարադատության մատչելիության» սկզբունքը հաճախ ընկալվում է որպես արդար դատաքննության իրավունքի օրգանական տարր, «դատարանի իրավունքի» մասնավոր դրսևորում[2]: «Արդարադատության մատչելիություն» և «դատարանի մատչելիություն» («դատարանի իրավունք») եզրույթների բնորոշումները սահմանված չեն և՛ ներպետական օրենսդրությամբ, և՛ միջազգային փաստաթղթերով. դրանք, թերևս, հնարավորինս բացահայտված են միայն դոկտրինալ աղբյուրներում: Մեր համոզմամբ, «արդարադատության մատչելիության» սկզբունքն առավել ընդգրկուն է, քան «դատարանի մատչելիությունը», և առավելապես «դատարանի իրավունքն» է դրա մասնավոր դրսևորումը, իսկ հակառակ մոտեցումն այս սկզբունքի խիստ նեղ մեկնաբանման արդյունք է, որի դեպքում միայն այն կարող է նույնանալ «դատարանի մատչելիություն» կամ «դատարանի իրավունք» հասկացություններին:

Գիտական տարբեր հետազոտությունները ցույց են տալիս, որ արդարադատության մատչելիության սկզբունքը հիմնականում կապվում է հենց դատական պաշտպանության իրավունքի հետ և ստանում լայն մեկնաբանություն: Հայրենական իրավագետներից Յու. Հայրապետյանի կարծիքով՝ արդարադատության մատչելիությունն օրենսդրական երաշխիքների ամբողջություն է, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուրին ազատորեն իրացնել դատական պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման իր իրավունքները[3]: Մ. Կապպելլետին և Բ. Բրյանթը «արդարադատության արդյունավետ մատչելիությունը» դիտարկում են ժամանակակից իրավական համակարգի ամենահիմնական պահանջը՝ ամենահիմնարար «մարդու իրավունքը», որը ձգտում է երաշխավորել, այլ ոչ թե ուղղակի հռչակել բոլորի օրինական իրավունքները. արդարադատության մատչելիության իրավունքն անհատական և սոցիալական իրավունքների շրջանակում առավել հաճախ ճանաչ-

---

[1] Տե՛ս **Панкова О.В.,** «Правосудие в современной России: понятие и признаки», Вестник РУДН. Серия: Юридические науки, Т. 22. № 4., 2018թ., էջ 535, https://www.researchgate.net/publication/333304485_JUSTICE_IN_MODERN_RUSSIA_THE_CONCEPT_AND_FEATURES/fulltext/5ce5fcf3299bf14d95b1d6ce/JUSTICE-IN-MODERN-RUSSIA-THE-CONCEPT-AND-FEATURES.pdf:

[2] Տե՛ս օրինակ, **Борисова В. Ф.**, «Соотношение международных и национальных правовых категорий в сфере доступности правосудия», Вестник ТГУ, выпуск 1 (5), ISSN 2413-6808, 2016թ., էջ 12, https://cyberleninka.ru/article/n/sootnoshenie-mezhdunarodnyh-i-natsionalnyh-pravovyh-kategoriy-v-sfere-dostupnosti-pravosudiya/viewer, **Դանիելյան Գ.Բ.,** «Արդարադատության մատչելիության արդիական հարցադրումները», հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում 16.11.2009թ., https://www.moj.am/article/NEW_86, ***Gerards Janneke H., Glas Lize R.,*** «Access to justice in the European Convention on Human Rights system», Vol. 35(1) 11–30, 2017 թ., էջ 14, https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0924051917693988:

[3] Տե՛ս **Айрапетян Ю. В.,** «Доступность правосудия в гражданском процессе Республики Армения и законодательные гарантии ее реализации», диссертаци на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04, Երևան, 2016թ., էջ 20, http://etd.asjoa.am/3588/1/%D0%94%D0%B8%D1%81%D1%81%D0%B5%D1%80%D1%82%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F_%D0%90%D0%B9%D1%80%D0%B0%D0%BF%D0%B5%D1%82%D1%8F%D0%BD_%D0%AE%D1%80%D0%B8%D0%B9.pdf:

վում է որպես առաջնային նշանակություն ունեցող, քանզի իրավունքների գոյությունն անհիմաստ է առանց դրանց արդյունավետ պաշտպանության կառուցակարգերի[1]: Ռուս տեսաբաններից Արգունովան արդար դատաքննության իրավունքի իրացումը և իրավունքների արդյունավետ վերականգնման ապահովումն իրավացիորեն պայմանավորել է արդարադատության մատչելիության իրավունքի գոյությամբ[2]: Կորպենն արդարադատության մատչելիության իրավունքը բնորոշել է որպես յուրաքանչյուր շահագրգիռ անձի հավասար հնարավորություն՝ անարգել դիմելու արդարադատության իրականացման դատական և այլ մեխանիզմների ու մասնակցություն ունենալ վեճի քննությանը դրա բոլոր փուլերում[3]: Ալիսովը արդարադատության մատչելիության սկզբունքը համարել է մարդու և քաղաքացու՝ խախտված իրավունքների, ազատությունների և շահերի դատական պաշտպանության ընդհանուր իրավական երաշխիքներից մեկը[4]: Պլաստինինան արդարադատության մատչելիությունը դիտարկել է որպես դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման միջոց, դրա իրական գոյության ապահովում՝ օրենսդրորեն նախատեսված ընթացակարգերի առկայությամբ միջնորդավորված (իրավասու դատարան բողոք, դիմում կամ որևէ այլ փաստաթուղթ ներկայացնելը, դրա քննարկումը և լուծումը, որոշման կայացումը)[5]: Մասալաջուի կարծիքով էլ՝ արդարադատության մատչելիությունն օրենսդրությամբ երաշխավորված հնարավորություն է շահագրգիռ անձանց համար ցանկացած փուլում նախաձեռնել դատական վարույթ և օրինական ու հիմնավորված դատական ակտի կայացման միջոցով ստանալ դատական պաշտպանություն[6]: Սիդորենկոն քննարկվող սկզբունքը սահմանել է որպես իր իրավունքների պաշտպանության համար անարգել դատարան դիմելու և դատական պաշտպանություն ստանալու օրենքով նախատեսված հնարավորություն, համարել այն ոչ միայն դատավարական, այլ նաև դատարանակազմական սկզբունք, միաժամանակ գտել, որ արդարադատության մատչելիության սկզբունքը միջձյուղային է և տարածվում է դատավարության բոլոր տեսակների վրա[7]: Թեև Ֆոկինն արդարադատության մատչելիությունը որակել է որպես կառուցակարգ, սակայն, միևնույն ժամանակ, կարծում է, որ այն չի կարող գոյություն ունենալ դատական պաշտպանության իրավունքից անջատ. հակառակը՝ հեղինակն արդարադատության մատչելիությունը համարել է նշված իրավունքի

---

[1] Տե՛ս **Garth, Bryant G. and Cappelletti, Mauro,** «Access to Justice: The Newest Wave in the Worldwide Movement to Make Rights Effective» Articles by Maurer Faculty, 1978թ., էջ 184-185, https://www.repository.law.indiana.edu/facpub/1142:

[2] Տե՛ս **Аргунова Е.Э.** «Условия обеспечения права на доступ к правосудию», Вопросы российского и международного права, Том 8. № 7А, 2018թ., էջ 138, https://cyberleninka.ru/article/n/usloviya-obespecheniya-prava-na-dostup-k-pravosudiyu/viewer:

[3] Տե՛ս **Корпен А.С.**, «К вопросу о содержании права на доступ к правосудию», Право. Журнал Высшей школы экономики, 2016թ., № 2, էջ 119:

[4] Տե՛ս **Алисов А. Н,** «Теоретико-правовые аспекты конституционного права на доступ к правосудию», Вестник Поволжского института управления, Том 20. № 2, 2020 թ., էջ 63, http://vestnik.pags.ru/vestnik/archive/Tom%2020%20N2/Alisov.pdf:

[5] Տե՛ս **Пластинина Е. В.**, «Правовые аспекты понятия «доступ к правосудию»», Марийский юридический вестник, выпуск 10, УДК 347.9, 2013թ., էջ 186, https://cyberleninka.ru/article/n/pravovye-aspekty-ponyatiya-dostup-k-pravosudiyu/viewer:

[6] Տե՛ս **Масаладжиу Р.М.,** «Проблемы обеспечения доступности правосудия на стадии надзорного производства в гражданском и арбитражном процессах», автореферат, диссертация на соискание учёной степени кандидата юридических наук, Մոսկվա, 2009թ. էջ 9, http://lawtheses.com/jreader/310355/a#?page=1:

[7] Տե՛ս **Сидоренко В. М.,** «Принцип доступности правосудия и проблемы его реализации в гражданском и арбитражном процессе», автореферат, диссертация на соискание учёной степени кандидата юридических наук, Եկատիրինբուրգ, 2002թ., էջ 8, https://www.prlib.ru/item/ 468760: https://rusneb.ru/catalog/000200_000018_RU_NLR_bibl_505456/:

բաղկացուցիչ մասը (տարրը), որը երաշխավորում է արդար դատաքննության նպատակներին հասնելու հնարավորությունը[1]:

«Արդարադատության մատչելիություն» հասկացությանը կարելի է մոտենալ նեղ, այսինքն՝ հիմնականում ընթացակարգային կամ առավել լայն ու առարկայական (բովանդակային) տեսանկյունից: Նեղ մոտեցմամբ՝ արդարադատության մատչելիությունը «կապված է օրինական իրավունքների ապահովման միջոցների հետ՝ մասնավորապես դատարանների և տրիբունալների միջոցով», ինչը հիմնականում նշանակում է դատարանում ընթացակարգը կիրառելու հնարավորություն: Առավել լայն մոտեցման դեպքում այս հասկացությունն ընդգրկում է նաև ընթացակարգի կամ միջոցի արդյունքը: Թեև քննարկվում է նաև ոչ դատական մարմինների (ինչպիսիք են ներպետական իրավապաշտպան կառույցները կամ մարդու իրավունքների պաշտպանը) դերը, սակայն միջոցը կամ ընթացակարգը, որոնց օգնությամբ իրացվում է բովանդակային արդարադատությունը, շարունակում է արդիական մնալ, քանզի ընթացակարգային երաշխիքների բացակայության դեպքում չի կարող լինել համոզմունք, որ արդարադատության մատչելիությունը հնարավոր է բովանդակային առումով ապահովել[2]: «Արդարադատության մատչելիություն» հասկացությունը պարտավորեցնում է պետություններին յուրաքանչյուր անձի համար երաշխավորել իրավական պաշտպանության միջոցներ՝ ստանալու դատարան կամ որոշ իրավիճակներում վեճերի լուծման այլընտրանքային մարմին դիմելու իրավունք, եթե հաստատվի տվյալ անձի իրավունքների խախտումը[3]:

Ինչ վերաբերում է խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու՝ դատարանի մատչելիության իրավունքին, ապա այն մեծամասամբ դասվում է դատական պաշտպանության հիմնարար իրավունքի ինքնուրույն բաղադրիչների շարքին. նման մոտեցում են ցուցաբերել ռուս տեսաբաններից Սոլովիխը[4], Կուրպասը[5], Կոնըշևը[6] և այլք: Դատական պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքը դիտարկվում է իրական կամ ենթադրյալ խախտված կամ վիճելի իրավունքի կամ օրենքով պահպանված շահերը պաշտպանելու նպատակով գործի ըստ էության քննության վարույթ հարուցելու համար շահագրգիռ անձի կողմից դատարան դիմելու օրենքով նախատեսված հնարավորություն[7]: Այս ի-

---

[1] Տե՛ս **Фокин Е.А.,** «Обеспечение доступности правосудия в условиях профессионализации российского арбитражного процесса», диссертация на соискание учёной степени кандидата юридических наук, Մոսկվա, 2020թ., էջ 46, 47, 48, https://www.hse.ru/data/xf/586/993/1594/%D0%A4%D0%BE%D0%BA%D0%B8%D0%BD%20%D0%95.%D0%90._%D0%94%D0%B8%D1%81%D1%81%D0%B5%D1%80%D1%82%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F.pdf:

[2] Տե՛ս **Gerards Janneke H., Glas Lize R.,** նույն աշխատությունը, էջ 13-14:

[3] Տե՛ս «Handbook on European law relating to access to justice», European Union Agency for Fundamental Rights and Council of Europe, 2016 թ., էջ 16, https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/fra-ecthr-2016-handbook-on-access-to-justice_en.pdf:

[4] Տե՛ս **Соловых С.Ж.,** «Конкретизация содержания субъективного процессуального права на доступ к правосудию в арбитражном судопроизводстве», Современное право, № 9, 2013թ., էջ 76-80:

[5] Տե՛ս **Курпас М. В.,** «Конституционно-правовое содержание и особенности реализации права на обжалование судебного решения», диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2017թ., էջ 20-21, https://rgup.ru/rimg/files/_%D0%94%D0%B8%D1%81%D1%81%D0%B5%D1%80%D1%82%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F_%D0%9A%D1%83%D1%80%D0%BF%D0%B0%D1%81.pdf:

[6] Տե՛ս **Конышев К.Е.,** «К вопросу о содержании права на судебную защиту», Право и политика, № 10, 2012 թ., էջ 1781-1782, https://nbpublish.com/library_get_pdf.php?id=21561:

[7] Տե՛ս **Зеленская Л. А., Якимова Т. Ю.,** «Способы и формы защиты нарушенных прав граждан и юридических лиц», Учебное пособие, Краснодар, КубГАУ, 2018թ., էջ 6, https://kubsau.ru/upload/iblock/388/388f1ee0e1a06ec5082678b09474de53.pdf:

ռավունքը «դատական պաշտպանության իրավունք» լայնընդգրկուն հասկացության մաս կազմող կառուցվածքային տարրերի շարքին է դասել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ-ը)[1]: Ըստ էության, դատարան դիմելն անձի իրավունքն է, որի իրացումն օրենքով նախատեսված իրավական գործընթաց է, պայմանավորված չէ դատական կամ հանրային իշխանության այլ մարմնի հայեցողությամբ, և այդ իրավունքի իրացմամբ առաջացած իրավական հետևանքները պարտադիր են ինչպես դիմող անձի, դատավարության մյուս մասնակիցների, այնպես էլ դատարանի համար[2]:

Դատական և միջազգային տարբեր մարմիններ, երբեմն նույնացնելով «արդարադատության մատչելիություն» և «դատարանի մատչելիություն» եզրույթները, առաջին հասկացությունն իրավացիորեն մեկնաբանում և կիրառում են լայն իմաստով: Ըստ ՄԻԵԴ-ի՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու պետություններին ուղղված պահանջը բխում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածից, «իրավական պաշտպանության միջոցի» «արդյունավետությունը» չի ենթադրում անկասկած դրական արդյունք[3], Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական կամ պատրանքային իրավունքները, այլ նրանք, որոնք գործնական և արդյունավետ են, ինչը, մասնավորապես, վերաբերում է դատարան դիմելու իրավունքին[4]: Արդարադատության մատչելիության իրավունքը 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է[5], այն չի վերաբերում միայն դատարանում արդեն իսկ հարուցված գործերին. 6-րդ հոդվածի 1-ին կետը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մյուս երաշխիքներից: Դատավարության այնպիսի բնորոշիչ հատկանիշները, ինչպիսիք են արդարացիությունը, հրապարակայնությունը և արագ ընթացքը, կորցնում են իրենց արժեքը, եթե բացակայում են դատավարական գործընթացները[6]: ՄԱԿ-ի Միավորված ազգերի զարգացման ծրագրի «Արդարադատության պլանավորում. մատչելիություն բոլորին» գործնական ուղեցույցում արդարադատության մատչելիությունը սահմանվել է որպես անձանց՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ ինստիտուտների միջոցով մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան իրավական պաշտպանության միջոցներ փնտրելու և ստանալու ունակություն[7]: Արդարադատության մատչելիությունը լայնորեն ընկալվում է նաև որպես իրենց իրավունքները պաշտ-

---

[1] Տե՛ս **Դավիդաս Վիտկաուսկաս, Գրիգորի Դիկով,** «Արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունն ըստ մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի», Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների ձեռնարկներ, Եվրոպայի խորհուրդ, 2012թ., հայերեն թարգ., 2014 թ., էջ 31:

[2] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016 թ. մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշումը, կետ 6, https://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1257.pdf:

[3] Տե՛ս ՄԻԵԴ-ի Avakemyan v. Armenia թիվ 39563/09 գործով 2017 թ. մարտի 30-ի վճիռը, կետ 43, 44, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-204645%22]}:

[4] Տե՛ս ՄԻԵԴ-ի Airey v. Ireland թիվ 6289/73 գործով 1979 թ. հոկտեմբերի 9-ի վճիռը, կետ 24, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57420%22]}:

[5] Տե՛ս ՄԻԵԴ-ի Golder v. The United Kingdom թիվ 4451/70 գործով 1975 թ. փետրվարի 21-ի վճիռը, կետ 35, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57496%22]}:

[6] Տե՛ս ՄԻԵԴ-ի Golder v. The United Kingdom նույն վճիռը, կետ 36:

[7] Տե՛ս United Nations Development Programme, «Programming for Justice: Access for All», A Practitioner's Guide to a Human Rights-Based Approach to Access to Justice, 2005 թ., էջ 5, https://www.un.org/ruleoflaw/files/Justice_Guides_ProgrammingForJustice-AccessForAll.pdf:

պանելու և իրենց բողոքների բավարարմանը հասնելու անձանց ունակություն[1]: Դատարան դիմելու անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումը Սահմանադրական դատարանը նույնպես համարել է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից մեկը: Այս տեսանկյունից՝ Բարձր դատարանն առաջնահերթ կարևորություն է տվել այն հարցին, թե որքանո՞վ է հասանելի արդարադատությունը, որքա՞ն արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը[2], հետևաբար, նաև դրանով պայմանավորված՝ դատավարական կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար[3]:

«Արդարադատության մատչելիության» սկզբունքն ընդգրկող տարրերի (պայմանների)՝ տեսության մեջ ընդունված դասակարգումները, ընդլայնելով դրա բովանդակության շրջանակը, հնարավորություն են տալիս առավել խորը բացահայտելու այս հասկացության էությունը: Մ. Կապպելլետիի և Բ. Բրյանթի կարծիքով՝ արդարադատության մատչելիությունը հնարավոր չէ հասկանալ առանց դրա տարրերի: Դատարանում ստացված արդյունքները տալիս են հավաքական ազդակներ, սակայն վեճերը քննող հաստատությունների այլ բնութագրիչները, ներառյալ արագությունը, արժեքը, ձևականությունը, միևնույն ժամանակ որոշում են, թե ինչպես է այդ հաստատության գոյությունն ազդում համայնքի գործունեության վրա[4]: Այս սկզբունքի բովանդակությունը բնութագրող տարրերի համակարգը դասակարգելու համար գործնական տեսանկյունից առավել արդիական են համարվել կազմակերպչական, իրավական և տնտեսական տարրերը[5]: Ալիսովը «արդարադատության մատչելիություն» սոցիալ-իրավական բազմասպեկտ հասկացության մեջ տարանջատել է տեսական, իրավական, կազմակերպական, ընթացակարգային ապահովման ենթակա հանգամանքները[6]: Այս սկզբունքը, ըստ որոշ հեղինակների, ներառում է դատարանակազմական, ֆինանսական, կազմակերպական և ընթացակարգային կողմեր[7]: Առանձին հեղինակներ տարանջատել են նաև արդարադատության մատչելիության սկզբունքի տարրերի (պայմանների) ինքնուրույն բաղադրիչները: Արգունովան, օրինակ, առանձնացրել է արդարադատության մատչելիության տարածքային (դատարանի գտնվելու վայրը), տնտեսական (դատական ծախսերը վճարելու հնարավորությունը), ընթացակարգային (ենթակայության և ընդդա-

---

[1] Տե՛ս An OECD White Paper in collaboration with the World Justice Project, «Building a Business Case for Access to Justice», էջ 5, https://www.oecd.org/gov/building-a-business-case-for-access-to-justice.pdf:

[2] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016թ. հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշումը, կետ 6, https://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1293.pdf:

[3] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016 թ. մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշումը, կետ 6, https://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1257.pdf:

[4] Տե՛ս **Bryant G. Garth, Cappelletti M.,** «Access to Justice as a Focus of Research», Maurer School of Law: Indiana University, Articles by Maurer Faculty, 1981 թ., էջ 14-15, https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=2133&context=facpub:

[5] Տե՛ս **Цурлуй О.Ю.**, «Доступность правосудия как социально-правовое явление уголовного судопроизводства», Территория науки, № 6, 2013թ., էջ 176-177, https://cyberleninka.ru/article/n/dostupnost-pravosudiya-kak-sotsialno-pravovoe-yavlenie-ugolovnogo-sudoproizvodstva/viewer:

[6] Տե՛ս **Алисов А. Н,** նշված աշխատությունը, էջ 63:

[7] Տե՛ս **Гриценко Е. В, Хайнтцен М.,** «Доступ к судебной защите в России и Германии», Вестник Санкт-Петербургского университета, Право 4: 733–755, 2019 թ., էջ 734, https://cyberleninka.ru/article/n/dostup-k-sudebnoy-zaschite-v-rossii-i-germanii/viewer:

տության տարանջատում, դատարան դիմելու ընթացակարգը, իրավաբանական օգնության երաշխավորումը), կադրային (դատարանների կադրային ապահովվածությունը) և այլ պայմաններ[1]: Շաքարյանը, որպես արդարադատության մատչելիության սկզբունքի հասկացությունն ընդգրկող պայմաններ, դիտարկել է օրենքով հստակ նախատեսված կարգով դատարան դիմելու երաշխավորված իրավունքը, որն օրենքը կիրառելիս կբացառի սուբյեկտիվիզմը, դատարանի՝ բնակչությանը մոտ լինելը, ողջամիտ դատական ծախսերն այն անձանց համար, ովքեր չեն օգտվում դրանցից ազատվելու իրավունքից, քաղաքացիական գործերի՝ ողջամիտ ժամկետում քննությունն ու լուծումը, դատավորների ծանրաբեռնվածության գիտականորեն հիմնավորված նորմատիվները, գործերի քննության ընթացակարգերի պարզությունն ու հստակությունը, իրավաբանական օգնության երաշխավորումը (անվճար՝ դրա կարիքն ունեցողներին)[2]: Բոլսունովի կարծիքով, քննարկվող սկզբունքի պայմանների շարքին կարելի է դասել իրավունքի պաշտպանության միջոցների ընտրության իրավունքը՝ առաջնային թողնելով դատական պաշտպանության իրավունքը և դատարանի համար պահպանելով վերահսկողական գործառույթը, տեղեկացված լինելու իրավունքը, պետության կողմից երաշխավորված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը[3]:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, իր հերթին անդրադառնալով արդարադատության մատչելիության դյուրինացման ուղիներին, անդամ պետություններին առաջարկել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի տեղեկացնեն անձանց իրենց իրավունքները դատարանում պաշտպանելու միջոցների մասին, ինչպես նաև՝ հեշտացնել, արագացնել և էժանացնել քաղաքացիական, առևտրային, վարչական, սոցիալական կամ հարկային գործերով դատավարությունները[4]:

Այսպիսով, ընդհանրացնելով արդարադատության մատչելիության սկզբունքին առնչվող գիտագործնական մոտեցումները՝ կարծում ենք, որ առավել ընդունելի է այս սկզբունքի լայն մեկնաբանությունը, որի դեպքում այն կարող է դիտարկվել որպես պետության կողմից երաշխավորված տարրերի (պայմանների) ամբողջություն՝ ուղղված խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի գոյությունն ու իրացումն ապահովելուն: Դատարանի մատչելիության իրավունքը շահագրգիռ անձին վերապահված սուբյեկտիվ իրավունք է, որը, հանդիսանալով արդարադատության մատչելիության սկզբունքն ընդգրկող բազմաշերտ տարրերից (պայմաններից) մեկը, կարող է արդյունավետ իրացվել օրենսդրությամբ նախատեսված որոշակի դատավարական ընթացակարգի միջոցով և միայն այս սկզբունքի իրական գոյության պայմաններում: Այլ կերպ՝ դատարանի մատչելիության սուբյեկտիվ իրավունքի արդյունավետ իրացումը հնարավոր է, երբ պետության կողմից ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ գործնականում երաշխավորված է յուրաքանչյուր անձի հասանելիությունը մատչելի արդարադատությանը: Արդարադատության մատչելիության սկզբունքի բովանդակությունից ելնելով՝ այն ընդգրկող տարրերը (պայմանները) մեր համոզմամբ նպատակահարմար է դասակարգել՝ 1) իրավական (օրենսդրությամբ առանց խտրականության յու-

---

[1] Տե՛ս **Аргунова Е.Э.,** նշված աշխատությունը, էջ 138:

[2] Տե՛ս **Шакарян М.С.,** «Проблемы доступности и эффективности правосудия в судах общей юрисдикции // Проблемы доступности и эффективности правосудия в арбитражном и гражданском судопроизводстве», Մոսկվա, 2001թ., էջ 62:

[3] Տե՛ս **Больсунов М. А.,** Условия обеспечения права на доступ к правосудию, Юридический процесс, N 11, 2013թ., էջ 34, https://law-journal.ru/files/pdf/201311/201311_31.pdf:

[4] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 14.05.1981 թ. արդարադատության մատչելիության դյուրինացման ուղիների մասին թիվ R (81) 7 հանձնարարականը, https://rm.coe.int/168050e7e4:

ռաքանչյուր անձի համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորումը, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորումը), 2) դատարանակազմական (դատական համակարգի կառուցվածքը, դատարանների իրավասությունը՝ ընդդատությունը, ենթակայությունը, դատարանների և դատարանների աշխատակազմերի կադրային ապահովվածությունը, դատարանների տարածքային տեղակայումը, դրանց հասանելիությունը բնակչությանը), 3) ընթացակարգային (դատարան դիմելու, գործը դատարանում քննվելու, դատական ակտերը բողոքարկելու, վերջնական դատական ակտի կատարման ընթացակարգերը և դրանց պարզությունը, գործի ողջամիտ ժամկետում քննությունը), 4) տնտեսական (ողջամիտ դատական ծախսերը, դատական ծախսերից ազատվելու կառուցակարգերը), 5) կազմակերպչական (դատավարական նորմերի, դատարան դիմելու կարգի ու ժամկետների, դատական ակտերի կատարման միջոցների վերաբերյալ անձանց տեղեկացված լինելու ապահովումը) տարրերի: Նշվածը ենթադրում է, որ իրավական և ժողովրդավարական պետություններում արդարադատության մատչելիության սկզբունքի գոյությունը պետք է ենթադրի դրա երաշխավորումը երեք ինքնուրույն մակարդակներում՝ մինչ դատարան դիմելը, դատարան դիմելուց հետո (այդ թվում նաև՝ վերաքննիչ ու վճռաբեկ դատական ատյաններում)՝ կոնկրետ տեսակի դատավարության միջոցով՝ դրա հատուկ առանձնահատկությունների հաշվառմամբ, դատարանի կողմից տվյալ գործով վերջնական դատական ակտը կայացվելուց հետո՝ դատական ակտի կատարման դատավարական փուլի շրջանակներում:

ПОНЯТИЕ И ЭЛЕМЕНТЫ ПРИНЦИПА ДОСТУПА К ПРАВОСУДИЮ

Татевик Сирадегян
Соискатель кафедры конституционного права ЕГУ

В статье автор раскрыл сущность принципа доступа к правосудию, обосновал, что этот принцип - составляющая права на судебную защиту, а не права на справедливое судебное разбирательство. Рассматривая узкое и широкое толкование принципа доступа к правосудию, автор отметил, что в случае исключительно узкого толкования этого принципа он не может отождествляться с правом доступа к правосудию (право суда). В статье автор представил элементы принципа доступа к правосудию, различные его классификации в научно-исследовательских работах. Обобщая научные и практические подходы к принципу доступа к правосудию, автор обозначил понятие принципа доступа к правосудию, отделив от его правовые, судебные, процессуальные, экономические, организационные элементы.

CONCEPT AND ELEMENTS OF THE PRINCIPLE OF ACCESS TO JUSTICE

Tatevik Siradeghyan
Applicant at YSU Chair of Constitutional Law

In the article, the author revealed the essence of the principle of access to justice, substantiated that it is not a component of the right to a fair trial, but the right to access to court. Considering the narrow and broad interpretation of the principle of access to justice, the author noted that only in the case of a narrow interpretation of this principle, it cannot be equated with the right of access to justice (the right of the court). In the article, the author presented the elements of the principle of access to justice, its various classifications in scientific research works. Summarizing the scientific and practical approaches to the principle of access to justice the author presented the concept of the principle of access to justice, separating from its elements legal, judicial, procedural, economic, organizational elements.

Բանալի բառեր – *դատական պաշտպանության իրավունք, արդար դատաքննության իրավունք, արդարադատություն, արդարադատության մատչելիության սկզբունք, դատարանի մատչելիության իրավունք, արդարադատության մատչելիության սկզբունքի տարրեր:*
Ключевые слова: *право на судебную защиту, право на справедливое судебное разбирательство, правосудие, доступ к правосудию, право на доступ к суду, элементы доступа к правосудию.*
Key words: *the right to judicial protection, the right to a fair trial, justice, principle of access to justice, the right to access to a court, elements of the principle of access to justice.*